Առաջին անգամն էր, որ ես դուրս էի գալիս փողոցը, այդ պատճառով երեխայի նման ամէն մի հանդիպած առարկան հետաքրքրում էր ինձ: Ես նայում էի, թէ ինչպէս նորահարսները, երեսները ծածկած, կամ հասած աղջիկները, բաց երեսներով, վաղ-առաւօտեան աւելում էին, մաքրում էին իրանց տան առջեւը: Նրանք ճարպիկ մատներով նախ գետինը ցօղում էին առոակից անցնող ջրով, որ փոշի չբարձրացնեն: Ես տեսնում էի, թէ ինչպէս հայ վաճառականները, աւանակների վրայ հեծած, մի առանձին հոգածութեամբ շտապում էին դէպի քաղաքը, իրանց խանութները բաց անելու: Ես տեսնում էի, թէ ինչպէս նրանք աջ ու ձախ կողմերից ողջոյններ էին ընդունում եւ, միեւնոյն ժամանակ, աւանակի վրայ նստած, շարունակում էին իրանց չաւարտած առաւօտեան աղօթքը, որպէսզի բարեյաջող առեւտուր ունենան:

— Այստեղ մի հիւանդի պէտք է նայել, — ասաց Ասլանը, եւ մենք մտանք մի տուն:

Տունը, որպէս երեւում էր, ժամանակով գեղեցիկ շինուածք էր ունեցել, բայց երկար տարիներ մնալով անխնամ եւ առանց նորոգութեան, համարեա աւերակ էր դարձել: Մի սենեակ միայն մնացել էր ամբողջ, ուր մենք ներս մտանք: Ես առաջին անգամ տեսնում էի աղքատութիւնը իր վերին աստիճանի սոսկալի պատկերի մէջ: Խոնաւ, առանց սփռոցի գետնի վրայ պառկած էր մի մանկահասակ կին. հնոտի, քրքրոած վերմակը հազիւ ծածկում էր նրան. բարձի փոխարէն դրած էր գլխի տակին հիւանդի նոյնպէս քրքրոած հագուստը: Նրա մօտ, ձեռքերը յուսահատական կերպով փակած ծնկների վրայ, նստած էր պառաւ սկեսուրը: Մի կիսամերկ երեխայ սողում էր հիւանդի անկողնի մօտ եւ խուլ մրմնջում էր:

Պառաւը, տեսնելով մեզ, կանգնեց եւ լռութեամբ գլուխ տոեց: Բժիշկը մօտեցաւ հիւանդին:

— Այժմ լաւ է, — ասաց նա, — վտանգը անցած պէտք է համարել: Դեղերի այլեւս պէտք չկայ. հարկաւոր է միայն այստեղ մաքուր պահել, թարմ օդ եւ լոյս ներս թող տալ, եւ ամենագլխաւորը՝ հիւանդին պէտք է լաւ սնունդ:

— Սնո՛ւնդ... — կրկնեց պառաւը, հոգոոց հանելով, — որտեղի՞ց գտնել: Կար ժամանակ, որ այս տունը լի էր աստծոյ ամէն բարիքներով. հարիւրաւոր աղքատներ ապրում էին մեր հացով, իսկ ա՛յժմ... ձեր բարի աչքով տեսնում եք... ի՞նչ է մնացել... բոլորը ոչնչացաւ... բոլորը կորաւ...

Արտասուքը խեղդեց նրան եւ չկարողացաւ շարունակել: